

ՀԱՆՐԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ՏԱՐԱՆՁԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Միքայել ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ասիստենտ

Բանալի բառեր. հանրային սեփականություն, սեփականատության ձևեր, հասարակական սեփականություն, վարչական սեփականություն, մշակութային սեփականություն, ֆինանսական սեփականություն, պետության կարիքներ

Հայաստանի անկախության մասին հռչակագրում ամրագրվել է սեփականության բազմաձևության սկզբունքը, որի հիման վրա 1995 թվականից ի վեր ՀՀ Սահմանադրությամբ նախատեսվել էր սեփականության ձևերի հավասար զարգացման ու պաշտպանության դրույթը՝ չհստակեցնելով դրա առանձին տեսակները (ՀՀ Սահմանադրական 11-րդ հոդված)¹: ՀՀ Սահմանադրության այս իրավանորմի համաձայն՝ պետության պոզիտիվ պարտականությունն է երաշխավորել, ապահովել ու պաշտպանել սեփականության իրավունքը՝ դրա համար ստեղծելով իրավական անհրաժեշտ նախադրյալներ:

Սեփականության ձևերի մասին դրույթը պահպանելու անհրաժեշտությունն այն է, որ հետխորհրդային հասարակությունում սեփականության ձևի կարգավորումն ու դրա հետագա զարգացումն անհրաժեշտ էր և շարունակում է անհրաժեշտ լինել իրավունքի ընդհանուր ազատական սկզբունքներով պայմանավորելու համար: Քանի դեռ մեր հասարակությունն անցում է կատարում «անցումային սոցիալիզմից» կապիտալիզմի, սեփականության ձևերի և դրանց հավասարության մասին սկզբունքն ամրագրելու անհրաժեշտությունը գործնական տեսանկյունից զգացվում է: Ուստի, 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության տեքստում սեփականության ձևերի մասին դրույթի վերականգնումն արդարացված է նման կարևորությամբ:

Ասվածը հաստատվում է նրանով, որ «սեփականության ձև» հասկացությունն իր պատշաճ մեկնաբանությունը չի ստացել ազգային իրավագիտության մեջ:² Հետազոտողների շրջանում միասնականություն չկա, անգամ, տերմինների հարցում. դասակարգման չափանիշները և սեփականության տիպ, ձև, տեսակ հասկացությունների հստակ տարանջատումը բացակայում

¹ ՀՀ Սահմանադրությունը / Ի. Գ. Ղ. Վլ. Նազարյանի ծանոթագրություններով և մեկնաբանություններով, Երևան, 1995, էջ 19:

² Քրմոյան Ս.Կ. Սեփականության իրավունքի սահմանադրական հիմունքները: Ատենախոսություն, 2002, էջ 105:

է,³ վիճարկվում է ընդհուպ սեփականության տարատեսակների ինքնուրույն գոյությունն ու դրանց իրավական կարգավորում տալու հարցը:

Հետխորհրդային երկրների դոկտրինայում գերիշխում էր այն կարծիքը, թե «սեփականության ձև» հասկացությունը բացառապես տնտեսագիտական է (այս կարծիքին է Ե. Ա. Սուխանովը՝ Լոմոնոսովի անվան համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչը), որը բացառում է «սեփականության ձևերի» հասկացությունը և դրա գոյությունն իրավական իմաստով: Նման պնդում կատարելով հանդերձ՝ Ե.Ա. Սուխանովը որոշակի վերապահում է անում՝ նշելով, որ եթե անգամ պետք է խոսել սեփականության ձևերի մասին, ապա պետք է ընդունել ընդամենը երկուսը՝ մասնավորն ու հանրայինը: «Մասնավոր սեփականության իրավաբանական հասկացությունը, որը տարածված է նաև զարգացած իրավական համակարգերում, կապված է միայն հանրային սեփականությանն այն հակադրելու հետ: «Մասնավոր», ըստ Ե. Սուխանովի, նշանակում է «ոչ հանրային» և ոչ ավելին⁴: Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ կան նաև սեփականության ձևերի տնտեսաիրավական հասկացության կողմնակիցներ (Ա.Վ. Վենեդիկտով, Ա.Վ. Կոլպակով, Օ.Ն. Սադիկով, Յ.Կ. Տոլստոյ և ուրիշներ):⁵ Սեփականության իրավունքի մեկ այլ հանրահայտ մասնագետ Կ.Ի. Սկլովսկին ընդգծում է, որ «սեփականության իրավունքն անմիջականորեն չի արտացոլում սեփականության տնտեսական հարաբերությունները, եթե անգամ վերջիններս և գոյություն ունեն»:⁶ Վերջինիս կարծիքով՝ սեփականության ձևերի բազմազանությունը հնարավոր է հայտնաբերել իրավունքի զարգացման պատմությունում, որն ինքնընթացիկ քննարկման նյութ է, համեմայն դեպս գոնե այս տեսանկյունից:⁷

Սեփականության ձևերի բաժանումը, սեփականության իրավունքի մեթոդաբանական խնդիրներից է: Ձևը երևույթի տարասեռ բաղադրատարրերի համադրումն ու ամբողջացումն է: Այն երևույթի միայն արտաքին դրսևորումը չէ, այլ ներքին ու արտաքին գործոնների փոխկապակցված կազմակերպվածքն է: Ուստի, սեփականության հարաբերությունները կարգավորող օ-

³ Управление государственной собственностью: Учеб. / Под ред. В. И. Кошкина. М. 2002, էջ 35-36, Лоскутов В.И. Экономические и правовые отношения собственности. Ростов-на-Дону, 2002, էջ 15:

⁴ Ст'ю Гражданское право: В 4 т. Том 2, отв ред. – Е.А. Суханов.- 3-е изд., перераб. и доп.- М.: Волтерс Клувер, 2005, էջ 22-26, Суханов Е.А. Право собственности в современной России // Собственность в XX столетии. М., 2001. էջ 772.

⁵ Ст'ю Соловьев В.Н. Гражданско-правовое регулирование отношений собственности в социальной сфере, автореф. дисс. на соискание ученой степени д. юр. н., М., 2011, էջ 24,

⁶ Склоковский К. И. Собственность в гражданском праве. М., 2002, էջ 159.

⁷ Նուև տեղում, էջ 160:

րենսդրությունը պետք է ապահովի, որպեսզի սեփականության իրավունքի տարրերի՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող առանձնահատկություններն անդրադառնան և արտահայտվեն սեփականատիրական հարաբերությունների կազմակերպման վրա՝ դրանով իսկ տարբերակված կարգավորում տալով սեփականության ձևերին:

Սեփականության առանձին ձևերը պայմանավորում են առանձնացված իրավական կարգավորման անհրաժեշտությունը, որով օբյեկտիվորեն գոյություն ունեցող տարբեր դրսևորումների համար նախատեսվում են իրավունքի իրականացման բովանդակային առումով հավասար պայմաններ: Յուրաքանչյուր իրավական և ժողովրդավարական, հետևաբար և ազատ շուկայական տնտեսությամբ պետությունում գույքային շրջանառությունը սկզբունքորեն պահանջում է սեփականատերերի գույքային իրավունքների հավասարություն: Սակայն անգամ բացարձակ հավասարությունը, այդ թվում՝ իրավական, անհրաժեշտաբար չի հանգեցնում նժարի վրա դրված մեծությունների նմանությանը կամ նույնությանը: Այսպես, վրացական իրավունքում հրաժարվել են սեփականության ավանդական ձևերից: Սեփականության ձևի բազմազանության սկզբունքից նահաջը հիմնավորովում էր նրանով, որ սեփականության ձևերի հավասարության մասին դրույթը վերացնում է սեփականության ձևերի տարբերակված իրավակարգավորման, հետևաբար և, սեփականության ձևերն առանձնացնելու անհրաժեշտությունը:⁸

Այս դատողությունն ունի տրամաբանական թերություն «հավասարություն» մեծությունը խեղաթյուրելու հարցում: Երկու՝ իրարից տարբեր երեւոյթների միջև դրված հավասարության նշանը չի նույնացնում դրանք և չի բացառում դրանց ինքնուրույն՝ միմյանցից անկախ գոյությունը: Երևույթների առանձնահատկություններով պայմանավորված հարաբերությունների բազմազանությունը կարող է ապահովել այնպիսի տարբերակված իրավակարգավորում, որը դրանց իրացման համար կապահովի հավասար երաշխիքներ: Սեփականության ձևերի հավասարությունը ենթադրում է սեփականության ձևերի տարբերակված այնպիսի իրավական կարգավորում, որը կապահովի դրանց իրացման կշիռային, այլ ոչ մաթեմատիկական հավասարությունը: Ուստի, այդ հավասարությունը պետք է հասկանալ բացառապես իրավական իմաստով:

Սեփականության ձևերի տարբերակումն օրենսդրորեն պայմանավորվում է գույքի իրավական առանձին ռեժիմներով: Իրավական ռեժիմն արտա-

⁸ Սա վրաց իրավագետների կարծիքով վրացական իրավունքի առանձնահատկություններից: Տե՛ս Чантурия Л.Л. Введение в общую часть гражданского права (сравнительно-правовое исследование с учетом некоторых особенностей постсоветского права). М.: Статут, 2006, էջ 56.

հայտում է սեփականության իրավունքի ձևը կամ տեսակը, ինչպես նաև ապահովում է դրա ճկունությունը: Իրավական ռեժիմն իրավական կարգավորման հատուկ կարգ է, որն արտահայտում է իրավաբանական միջոցների որոշակի համադրություն, ստեղծում է սոցիալական ցանկալի վիճակ և որոշակի հարմարավետության կամ անհարմարավետության աստիճան իրավունքի սուբյեկտների շահերը բավարարելու համար⁹: Իրավական առանձին ռեժիմներ սահմանելիս պետք է հաշվի առնել, որ սեփականության տարբեր ձևերի առանձնահատկությունները շաղկապված են սեփականության իրավունքի տարրերի առանձնահատկություններով: Իրավագիտության մեջ սեփականության իրավունքի ձևերը բաժանում են՝ հիմք ընդունելով իրավահարաբերության տարրերը՝ սուբյեկտը, օբյեկտը և բովանդակությունը:

Ըստ սուբյեկտի՝ սեփականության իրավունքը բաժանվում է ֆիզիկական, իրավաբանական անձի, պետական, համայնքային, արտասահմանյան երկրների, միջազգային կազմակերպությունների և այլ տեսակների: Այս հիմքով սեփականության ձևերի բաժանումն արտասահմանյան գրականությունում անվանում են նաև օրգանական: ԱՊՀ երկրներում, այդ թվում՝ Յայաստանում, ընդունվել է սեփականության ըստ սուբյեկտների բաժանելու հայեցակարգը, ըստ որի՝ հանրային է այն գույքը, որը պատկանում է հանրային իրավական կազմավորումներին:

Արտասահմանյան երկրների օրենսդրական պրակտիկայում հայտնի է սեփականության ձևերն ըստ օբյեկտների բաժանելու փորձը:¹⁰ Ըստ օբյեկտի սեփականության ձևերն առանձնացվում են՝ հիմք ընդունելով օբյեկտի առանձին տեսակները (օրինակ, հողային, առևտրային, գյուղատնտեսական, ատոմային և այլն)¹¹, կամ ըստ օբյեկտների դասակարգման հիմքերի (անշարժ-շարժական, մարմնական-ոչ մարմնական): Շվեյցարիայում, օրինակ, օրենսդրորեն սեփականության ձևերն առանձնացվում են՝ հիմք ընդունելով օբյեկտների բաժանման հիմքերը՝ նյութական և ոչ նյութական սեփականության: Գրականության մեջ առաջարկվում է նաև սեփականության ձևերը

⁹ Գույքի իրավական ռեժիմների մասին մանրամասն տե՛ս Современное вещное право России: учеб. пособие для студентов вызов, под ред. Е.В. Богданова, Н.Д. Эриашвили. – М.: Закон и право, 2014, էջեր 45-49.

¹⁰ Современное вещное право России: учеб. пособие для студентов вузов, под ред. Е.В. Богданова, Н.Д. Эриашвили, М.: Закон и право, 2014, էջ 45.

¹¹ Ֆրանսիայում, Անգլիայում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում և այլուր, որտեղ մտավոր սեփականության իրավունքը սեփականության իրավունքի ենթաճյուղ է, սեփականության ձևերն ըստ օբյեկտների բաժանման արդյունք է:

տարբերակել ըստ գույքի ոլորտային գործառնական նշանակության (բժշկական, կրոնական և այլ տեսակի)¹²:

Եթե սեփականության ձևերի ըստ սուբյեկտի և օբյեկտի բաժանումը տեսական և գործնական հարթություններում խնդիրներ չի առաջացնում, ապա սեփականության ձևերի ըստ բովանդակության բաժանելու ըմբռնումն արդի իրավագիտության առջև ծառայած բարդություններից է: Այսպես, ռուս իրավագետներ Ե. Ա. Կիկոտն ու Մ. Ի. Կուլագինը, վերլուծելով կապիտալիզմը մենաշնորհային փուլում, եզրակացրել են, որ սեփականության ձևերի բովանդակության հիմքով բաժանելը դրսևորվում է նրանում, որ իրականացվում է մեկ օբյեկտի սեփականատիրոջ լիազորությունների վերաբաշխումը բազմաթիվ սուբյեկտների միջև, այսինքն՝ գույքի հասարակության համար կարևորության աստիճանի և դրա նկատմամբ օգտագործման և տնօրինման իրավազորությունների և պարտականությունների ծավալի բաշխման:¹³ Սեփականության ձևերն այս հիմքով բաժանելու դեպքում կարևորվում է գույքի հասարակական նշանակությունը և դրա նկատմամբ օգտագործման և տնօրինման իրավազորությունների ու պարտականությունների ծավալի բաշխման հանգամանքը: Ուստի, եթե օրգանական հայեցակարգի պարագայում՝ հանրային սեփականություն է հանրային իրավական կազմավորումներին պատկանող գույքը, ապա գործառնականի դեպքում՝ պետական կամ համայնքային հանրությանը ծառայող գույքը:¹⁴

Այն հարցը, թե որ դասակարգմանը պետք է տալ առավելությունը, որոշում է գործնական նպատակահարմարությունը: Այս առումով չենք կիսում Կ.Ի. Սկլովսկու դիրքորոշումն առ այն, որ սեփականության իրավունքի ձևերի հարցում քաղաքացիական օրենսդրությունում ըստ սուբյեկտի ընդունված բաժանումը միակ թույլատրելի է¹⁵: Հանրային սեփականության ձևերի բաժանումը պետականի և համայնքայինի ինքնին խնդիր չէ: Խնդիրը տեսնում ենք պետական կամ համայնքային սեփականության տարբեր տեսակները չառանձնացնելու և այդ տեսակներին առանձնացված կարագավորում չտալու մեջ: Թե՛ հանրային, թե՛ մասնավոր իրավունքում հնարավոր է սեփականության իրավունքի ձև-տեսակների առանձնացումն ինչպես ըստ սուբ-

¹² Տե՛ս Колпакова А.В. Формы собственности и их соотношение // Актуальные проблемы гражданского права / под ред. С.С. Алексеева; Исследовательский центр частного права. М., 2000, էջեր 126-147.

¹³ Տե՛ս Суханов Е.А. О понятии и видах вещных прав в российском гражданском праве, Актуальные проблемы права собственности. Материалы научных чтений памяти проф. Н. Братуся (Москва. 25 октября 2006 г.). М.: ИД "Юриспруденция", 2007, էջեր 36-45.

¹⁴ Տե՛ս Yolka P. La propriété publique: éléments pour une théorie, Paris, 1997, էջ 7.

¹⁵ Склоковский К.И. Собственность в гражданском праве, М.: Изд-во "Дело", 2002, էջ 166.

յեկտների, օբյեկտների և բովանդակության առանձին-առանձին, այնպես էլ բաժանման երկու կամ երեք հիմքերի միաժամանակյա առկայությամբ: Այսպես, օրինակ, հողային պետական սեփականությունը, որը հանձնված է հասարակության անմիջական օգտագործմանը, պահանջում է իրավական բոլորովին այլ կարգավորում, քան հողային մասնավոր սեփականությունը:

Ձարգացած իրավական համակարգերում ընդունված է համարել, որ սեփականության ձևերի բաժանումն ըստ բովանդակության ավելի առաջադեմ է, քան սեփականության ձևերի՝ ըստ սուբյեկտների կամ օբյեկտների բաժանումը: Այդ իսկ պատճառով իրավական այդ համակարգերում իրավաբանական գրականությունում առաջարկվում է օրենսդրորեն կարգավորել սեփականության ձև-տեսակները՝ հիմք ընդունելով սեփականատիրական հարաբերությունների բաժանումն ըստ բովանդակության:¹⁶

Յուրաքանչյուր ինստիտուտ իր զարգացման տարբեր փուլերում բարդանում է: Չլինելով բացառություն՝ հանրային սեփականությունն էլ բարդացել և ճյուղավորվել է: Այս եզրույթին զուգահեռ, իսկ երբեմն դրա փոխարեն, գրականությունում հաճախ են օգտագործում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ հանրային, ազգային, ժողովրդական, պետական, հանրապետական (համաժողովրդական) վարչական, համայնքային, հասարակական հասկացությունները:¹⁷

«Հասարակական սեփականություն» բառակապակցությունը հաճախ է գործածվում հանրային, ազգային, ժողովրդական սեփականություն հասկացություններին զուգահեռ, որոնք ամենևին սովետական կարգերից մնացած ժառանգություն չեն: Այս բառակապակցությունը հաճախ է հանդիպում թե՛ առօրյա խոսքում, թե՛ գրականությունում, թե՛ բառարաններում:¹⁸ Ո՞րն է «հասարակական սեփականությունը», ինչպիսի՞ բնույթ ունի այն և ինչպե՞ս է փոխհարաբերակցվում հանրային սեփականության այլ տեսակների հետ:

Արդի զարգացած իրավական համակարգերում հանրային սեփականության տեսակների շարքում հասարակական սեփականության առանձնացման ավանդույթները հռոմեական իրավունքից են: Թեպետ հանրային սեփականության հասարակական տեսակը ծանոթ է եղել նաև իրավական այլ համա-

¹⁶ Արտասահմանյան երկրներում սեփականության ձևերի տարանջատման վերաբերյալ տես սույն աշխատության շարունակությունում:

¹⁷ Ազգային սեփականության վերավերյալ տես Խաչատրյան Ս. Հանրային սեփականության իրավունքի էությունը, «Դատական իշխանություն», 2013, N 5, էջ 52-59.

¹⁸ Տես Աղայան Էդ. Արդի հայերենի բառարան, (Ա-Չ), Երևան, 1976, էջ 828.

կարգերին, ինչպիսին է, օրինակ, միջնադարյան Չինաստանը¹⁹: «Չասարակականը», ըստ Էդ. Աղայանի նույն բառարանի, դիտվում է որպես հասարակությանը հատուկ, հասարակությանը վերաբերող²⁰: Լեզվական խոսքում հաճախ են օգտագործվում «հասարակական կյանք», «հասարակական վայր» արտահայտությունները, որոնցում «հասարակական» ածականին տրվում է «հանրային» իմաստը: Այդպես էլ «հասարակականը» նույն բառարանում սահմանվում է որպես «հասարակության՝ բոլորի օգտագործման համար նշանակված՝ ստեղծված», «հասարակության սեփականությունը կազմող, հանրային»²¹: Յետևաբար, հասարակական է գույքը, որ հանձնվել է հասարակության ամեն անդամի ազատ օգտագործմանը (*res in usu publico*):

Ինչ վերաբերում է «հանրայինի» և «հասարակականի» փոխհարաբերակցությանն օրենսդրական հարթությունում, ապա ՀՀ գործող օրենսդրությունում «հանրային» եզրույթը «հասարակականի» համեմատությամբ ավելի լայն է և իմաստային առումով ներառում է վերջինիս բովանդակությունը: Այսպես, «Չասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» 27.11.2006 թվականի ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը բացառիկ՝ գերակա հանրային շահը նախատեսում է որպես հասարակության և պետության կարիքների համար սեփականությունն օտարելու սահմանադրական հիմք: Օրենքը, միմյանցից առանձնացնելով «հասարակական» և «պետական» հասկացությունները, ներառում է այդ երկուսը «հանրային» հասկացության մեջ:

Հասարակական գույքի տարբերակիչ հատկանիշներից է հասարակական գույքի հանրամատչելիությունը դրա օգտագործման ձևով: Գույքի հանրամատչելիությունը չի ենթադրում միայն գույքի ֆիզիկական օգտագործման հանրային հասանելիությունը: Յուրաքանչյուր հանրային գույք համարվում է հանրամատչելի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ վարչական ակտով: Դրանք են՝ փողոցները, մայթերը, պուրակները, կամուրջները, հրապարակները, ջրային տարածքներն ու հարակից ափերը և այլն:

Հասարակական սեփականության հանրամատչելիությունը, այնուամենայնիվ, հանրային սեփականության այլ տեսակներից տարբերակող միակ հատկանիշը չէ, քանզի հանրամատչելիությունն այս կամ այն ձևով հանրային սեփականության բոլոր ձևերի առանձնահատկությունն է: «Հանրային սեփականություն» ընդհանուր հասկացության մեջ հասարակական տեսակի առանձնացումը հանրային սեփականության մյուս տեսակներից կարևորվում է

¹⁹ Кычанов Е.И. Основы средневекового китайского права (VII-XIII), М.: Наука, 1986, էջ 190 // Մեջբերումն ըստ Քրմոյան Ս.Կ. Սեփականության իրավունքի սահմանադրական հիմունքները: Ատենախոսություն, 2002, էջ 105.

²⁰ Աղայան Էդ., նույն տեղում:

²¹ Աղայան Էդ., նույն տեղում:

դրա մասնավորեցնելու հնարավորությունն առհասարակ բացառելու առումով: Այն անմիջականորեն շաղկապված է հասարակական սեփականության իրավունքի անձեռնմխելիության գաղափարի հետ, որը հատուկ է հանրային սեփականության բոլոր տեսակներին, բայց ավելի նվազ ձևով:

Հանրային գույքը, որպես կանոն, կարող է մասնավորեցվել: Հանրային սեփականության այն գույքը, որը հանձնվել է հասարակության անմիջական օգտագործմանը հարաբերականորեն չի կարող ապահանրայնացվել: Այսպիսի գույքը մասնավորեցնելու արգելքը պայմանավորված է օբյեկտիվ գործոնների առկայությամբ: Սա նշանակում է, որ այդ գույքի նկատմամբ պետք է արգելվի կնքել նաև անհատույց կամ հատուցելի օգտագործման պարտավորական գործարքներ (վարձակալության, անհատույց օգտագործման հանձնելու պայմանագրեր և այլն), ամրացման կամ այլ վարչական ակտերով հանձնվեն պետական կազմակերպություններին:

Անկախության անցած քսանհինգ տարիների ընթացքում այդպիսի կանոնների բացակայության պայմաններում հասարակության անմիջական օգտագործման ենթակա գույքի մասնավորեցման բացասական հետևանքների օրինակները բազմաթիվ են՝ յուրաքանչյուր բնակավայրի կենսագործունեության համար անհրաժեշտ միջմայթային և պուրակային կանաչապատ, Սևնա լճի ափամերձ տարածքների մասնավորեցումը՝ զուգորդված ծառահատումներով: Լավ օրինակ է նաև բազմաբնակարան շենքերի առընթեր՝ ընդհանուր օգտագործման համար անհրաժեշտ հարակից համայնքային տարածքները բարձրահարկ շենքեր կառուցելու համար հատկացնելու փորձը: Այս դեպքում բնակիչները ոչ միայն զրկվում են շենքի գործառնական օգտագործման համար անհրաժեշտ տարածքներից և լուսավորությունից, այլև ստեղծում են բարձր ռիսկայնություն ու խոցելիություն՝ վտանգելով հանրային առողջությունն ու անվտանգությունը, հատկապես երբ տարածաշրջանը պատերազմական և երկրաշարժային գոտում է:

Հանրային գույքի մյուս տեսակը հասարակական գույքից առանձնանում է նրանով, որ այն հասարակության համար ունի գործառնական, մշակութային կամ այլ կարևոր նշանակություն, հանձնվել է հասարակության անմիջական օգտագործմանը, որից օգտվելու կարգը, սակայն, սահմանվում-նորմավորվում է հանրային իրավական կազմավորումների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով: Այսպիսին են համարվում թանգարանները, արխիվները, գերեզմանները և այլն: Դրանք իրենց բնույթով, որպես կանոն, տարբեր շարժական և անշարժ գույքի իրավաբանորեն անբաժանելի համակցություն կազմող գույքային համալիրներ են: Բացի այս հանգամանքից, հանրային գույքի այս տեսակի կառավարումն անհնար է առանց գործադիր իշխանության ներգործության միջոցների կիրառման: Հանրային գույքի այս տեսակի առանձնացումը և դրան առանձնացված իրավական

կարգավորում տալը հատկապես կարևորվում է դրա իրավական պաշտպանության տեսանկյունից: Գրադարանների, թանգարանների և այլ նման ոլորտային հաստատությունների՝ առանձնացված օրենսդրական կարգավորումների անհրաժեշտությամբ պայմանավորված օրենսդրական նախագծերը մշակելու գործընթացներն իրականացվելու հանգամանքը վկայում է Հայաստանում սեփականության այս տարատեսակի ինքնուրույնությունն ընդունելու մասին²²: ՀՀ ազգային գրադարանը ծառայում է մարդու մշակութային իրավունքների իրացմանը, որին անմիջապես հարակից տարածքներում կառուցվել և շարունակաբար տեղակայվում են ժամանցի աղմկոտ վայրեր, Գառնու տաճարային համալիրում կազմակերպվում են հարսանեկան միջոցառումներ, Ջվարթնոցում և այլ հասարակական վայրերում գործում են նկարահանումների համար սակագներ և այլն: Առաջացած այս խնդիրների պատճառն օրենսդրական պատշաճ կարգավորումների բացակայությունն է, որոնց իրականացման համար անհրաժեշտ է ընտրել իրավական կարգավորման համապատասխան տարբերակված կառուցակարգեր:

Իրավաբանական գրականության մեջ հանդիպում ենք այլ դասակարգումների: Ռուսական իրավաբանական գրականության մեջ, օրինակ, իրավագետները հաճախ պետական սեփականություն հանդիսացող գույքը բաժանում են երկու մասի՝ պետական կազմակերպություններին հատկացված գույք և պետական գանձարան (ձեռնարկություններին և հիմնարկներին չամրացված պետական ունեցվածք):²³ Նման բաժանումը գուցե հիմնավորված է ՌԴ իրականության համար, որտեղ պետական ձեռնարկություններին (унитарные и казенные предприятия) գույքը չի փոխանցվում սեփականության իրավունքով: ՀՀ օրենսդրական կարգավորումների պայմաններում, երբ պետական ոչ առևտրային կազմակերպությունները հիմնադիր-պետության կողմից հանձնված գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում են սեփականության իրավունքով, այդպիսի բաժանում հնարավոր չէ («Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, 4-րդ հոդվ.): Տրամաբանական ենք համարում, որ պետական կազմակերպություններին սեփականության իրավունքով հանձնված գույքը չպետք է ենթադրի հանրային սեփականության ապահանրայնացում: Անգամ Խորհրդային Միությունում պետական գույքը, որ պետական ձեռնարկություններին հանձնվում էր ի տնօրինություն, պետական սեփականությունն էր և չէր առանձնացվում հիմնադրի գույքից: Մինչդեռ, գործող ազգային օրենսդրության մեջ ընտրված

²² ՀՀ կառավարությունը շրջանառության մեջ է դրել «Գրադարանների մասին», «Թանգարանների մասին» օրենքների նախագծերը:

²³ Տես Гражданский кодекс Российской Федерации – Коментарий, фирма “Спарк”. М., 1995, էջ 276, Комментарий к гражданскому кодексу РФ, М., 1997, էջ 428, ըստ Բարսեղյան Տ.Կ. ՀՀ քաղաքացիական իրավունք (4-րդ հրատ.), Երևան, 2014, էջ 354,

իրավական մեխանիզմները չեն արտահայտում այդ տրամաբանությունն ամբողջությամբ: Օրենքով սահմանված պետական կազմակերպություններին գույքը վարչական ակտով՝ ամրացնելու միջոցով և սեփականության իրավունքով փոխանցելու փոխարեն հիմնադրի կողմից կազմակերպություններին գույքով կարելի է ապահովել քաղաքացիական իրավունքի գործարքների միջոցով, օրինակ՝ լիազորագրային կառավարման գույքը հանձնելու պայմանագիրը, վարձակալության պայմանագիրը և այլն:

«Վարչական սեփականություն» հասկացությունը ծանոթ է եվրոպական զգալի մասի երկրների օրենսդրություններին: «Վարչական սեփականության» հասկացության մասին խոսել են ֆրանսիական վարչական իրավունքի նախահայրեր Ա. Օրիուն (Hauriou) և Ա. Լոբադերը (Laubadère) իրենց 20-րդ դարի դասական համարվող աշխատություններում:²⁴ Ա. Օրիուն, օգտագործելով «վարչական գույք» արտահայտությունը (գույք և սեփականություն բառերը ֆրանսերենում օգտագործում են որպես համարժեք հասկացություններ), գտնում է, որ վերջին երկու եզրույթները պետք է դիտարկել որպես հոմանիշներ՝ բազմիցս հիշատակելով նրանց համարժեքությունը:²⁵ Իրավագետ Ֆ. Յուկան, լինելով ֆրանսիական հանրային սեփականության իրավունքի տեսության ճանաչված մասնագետ, կիսում է Ա. Օրիունի այս կարծիքը՝ օգտագործման տեսանկյունից նախապատվությունը տալով «հանրային սեփականություն» բառակապակցությանը:

Ռուսական օրենսդրությանն այս հասկացությունը ևս ծանոթ է «զերատեսչական սեփականություն» (ведомственная собственность) հասկացության ներքո, որը ենթադրում է ոչ միայն համայնքային մարմիններին՝ իրենց պարտադիր լիազորություններն իրականացնելու համար տրամադրվող գույքը, այլև համայնքային ծառայողներին անհատական օգտագործման նպատակով տրամադրվող գույքը:

Թեև մեր իրավական համակարգին «վարչական գույք» բառակապակցությունը խորթ է, այնուամենայնիվ, ազգային օրենսդրությունում այդ երևույթը գոյություն ունի: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով նախատեսված է «պետության կամ համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ գույք» հասկացությունը, որը անհրաժեշտաբար ներառում է տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ղեկավարի, ավագանու և աշխատակազմի) պարտադիր լիազորությունների իրականացումն ապահովելու համար հատկաց-

²⁴ Sté Laubadère A., *Domanialité publique, propriété administrative et affectation*, Paris : Librairie générale de droit et de jurisprudence, 1950.

²⁵ Hauriou A. *L'utilisation en droit administratif des règles et principes du droit privé*. *Mélanges Fr. Gény*, T. 3, Paris, Sirey, 1935, էջ 92.

վող գույքը: Բացի այդ, պետական և համայնքային ծառայողներին կարող են տրամադրվել անհատական օգտագործման համար մեքենա, բնակարան, զենք, որոնք ևս հանրային սեփականություն են:

Վարչական գույքի կազմի մեջ է ներառվում պետության՝ արտասահմանյան երկրներում գտնվող դիվանագիտական հաստատություններին իրենց պարտադիր լիազորություններն իրականացնելու համար հանձնված գույքը, որն օգտագործելու և տնօրինելու համար հատուկ իրավական նորմեր ՉՉ օրենսդրությամբ նախատեսված չեն: Այդպիսի գույքի կառավարման հարցերը կարգավորվում են, որպես կանոն, երկկողմանի միջազգային պայմանագրերով: Իրավական կարգավորման բացակայությունը խոչընդոտում է արտասահմանում գտնվող գույքի հանրային սեփականության իրավունքի ընդհանուր սկզբունքներով շահագործելուն և դրանց հաշվին ներդրումներ ներգրավելուն: Ընդունված է համարել, որ պետական տարածքում հանրային սեփականության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար իրականացվող միջոցառումները չեն կարող լինել նույնն այն գույքի համար, որը գտնվում է արտասահմանում: Այսպիսով, «վարչական գույք» ասելով՝ պետք է հասկանալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին իրենց պարտադիր լիազորություններն իրականացնելու համար հատկացված գույք:

Վարչական գույքից առանձնանում են հատուկ նշանակության պետական գույքը: «Պետական գույքի կառավարման մասին» 2014թ. ՉՉ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում առանձնացվում է հանրային «հատուկ նշանակության պետական գույքի» տեսակը, որի ներքո հասկացվում է պաշտպանական, սահմանային, ռազմական նշանակության, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանությունն ապահովող, ինչպես նաև հատուկ նշանակության հիդրոհանգույցների և հիդրոտեխնիկական կառուցվածքների պետական գույքը: Հանրային գույքի նման բաժանումը իրականացվել է ոչ թե օրգանական սկզբունքով, այլ ելնելով գույքի նպատակային նշանակության և դրա նկատմամբ իրավունքների իրականացման ծավալի բաշխվածության: ՉՉ օրենսդրությունում հանրային գույքի այս և վարչական տեսակների բաժանման փաստը խոսում է հանրային սեփականության ոչ միայն հարաբերությունների սուբյեկտի, այլև օբյեկտի և բովանդակության հիմքով բաժանելու անհրաժեշտության օգտին: Առանձնացված և տարբերակված իրավական կարգավորում ունի նաև ֆինանսական գույքը: Բյուջետային միջոցների դեպքում օրենսդրական տարբերակված կարգավորումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, այդ թվում՝ նրանով, որ սեփականության իրավունքի բովանդակության դասական (տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու) կառուցվածքը

դրանց դեպքում չի պահպանվում: Ավելի հստակ՝ բյուջետային միջոցների տնօրինման լիազորությունները համընկնում են և չեն տարբերակվում:

Արևմուտքում ֆինանսները լինում են հանրային և մասնավոր: Եթե կենտրոնացված (հանրային) ֆինանսներն ընդգրկման տեսանկյունից համարժեք են, ապա ապակենտրոնացվածը (մասնավորը) տարբեր են: Առաջինները ներառում են հասարակական կարիքների բավարարմանն ուղղված ֆինանսները: Ապակենտրոնացված ֆինանսներն ընդգրկում են կազմակերպությունների ֆինանսական միջոցները, իսկ մասնավորն ավելի լայն ընդգրկում ունի՝ քաղաքացիների և կազմակերպությունների ֆինանսական միջոցները²⁶: Ազգային իրավական համակարգում ֆինանսները հասարակությունում առկա ոչ բոլոր փողային հարաբերություններն են, այլ դրանց մի մասը, որոնք կապված են պետության խնդիրների և գործառույթների իրականացման և ընդլայնված վերարտադրության պայմանների ապահովման նպատակով դրամական միջոցների կենտրոնացված և ապակենտրոնացված հիմնադրամների ձևավորման, բաշխման և օգտագործման հետ:²⁷

Հանրային ֆինանսները (ոչ առանց բացառության) գտնվում են քաղաքացիաիրավական շրջանառության մեջ և զգալիորեն կարգավորվում են նաև քաղաքացիաիրավական նորմերով: Ի տարբերություն հասարակական և վարչական գույքի տեսակների՝ ֆինանսական գույքը ծառայում է հանրային շահին ոչ թե իր օգտակարությամբ, այլ իր արժեքայնությամբ: Հանրային ֆինանսական միջոցների կառավարման պարտադիր տարրը դրանց օգտագործման վերահսկողություն իրականացնելու հնարավորությունն է:

Պետական և համայնքային բյուջետային և այլ միջոցները ՀՀ-ում առանձնացված իրավական կարգավորում են ստացել ինչպես Սահմանադրությունում, այնպես էլ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, «Հարկերի մասին» և առանձին հարկատեսակների մասին օրենքներով, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական և այլ իրավական ակտերով: ՌԴ-ում նույն հարաբերությունները կարգավորվում են երկու համակարգված՝ հարկային և բյուջետային օրենսգրքերով: Շվեյցարական իրավագիտական դոկտրինայում միասնականորեն ընդունված է ֆինանսական գույքը առանձնացնել հանրային գույքի ընդհանուր և վարչական գույքի տարատեսակների (ֆր.՝ Patrimoine financier, գերմ.՝ Finanzvermögen): Արտասահմանյան երկրների սահմանադրաիրավական համապատասխան նորմերի վերլուծությունը վկայում է, որ հանրային ֆինանսների տնօրինումն էականորեն առանձնանում է, ուստի և կարիք է զգում հատուկ իրավական կարգավորման,

²⁶ Ալոյան Տ. Ֆինանսական իրավունք. - Եր.: Տիգրան Մեծ, 2003, 88, էջ 6:

²⁷ Финансы. Денежное обращение. Кредит. М., 1997, С. 63 // Մուրադյան Ա.Վ., Շափիրյան Է.Է.Ֆինանսական իրավունք: Ուսումնական ձեռնարկ, Եր, 2006, էջ 3:

ինչը պայմանավորված է ոչ միայն գույքի, այլև սուբյեկտի առանձնահատկություններով: Այսպես, Ճապոնիայի սահմանադրությունը նախատեսում է, որ «պետական ֆինանսների տնօրինման իրավունքն իրականացվում է պառլամենտի որոշումների հիման վրա, (...) պետական ոչ մի միջոց չի կարող ծախսվել, ինչպես նաև պետական ֆինանսական պարտավորություն չի կարող ծագել, եթե առկա չէ պառլամենտի կայացրած որոշումը:»²⁸ (Ճապոնիայի սահմանադր. 83-րդ և 85-րդ հոդվ.): Իսկ Լյուքսեմբուրգի սահմանադրությունում ամրագրված է, որ «առանց օրենսդրի համաձայնության որևէ փոխառություն պետության հաշվին չի կարող իրականացվել»: Ավելին, անգամ «պետությանը պատկանող ցանկացած գույք չի կարող օտարվել, եթե դրա օտարումը թույլատրված չէ հատուկ օրենքով: (...) Որևիցե պարտավորություն, որը կծանրաբեռնի պետական բյուջեն ավելի, քան մեկ տարի, չի կարող ընդունվել այլ կերպ, քան հատուկ օրենքի հիման վրա»²⁹: Դրամական միջոցների նկատմամբ սեփականատիրոջ օգտագործման և տնօրինման իրավագործությունների բնույթն առանձնահատուկ է: Փողից բնական հատկություններ քաղելու կամ ուղղակիորեն դրանից օգուտ ստանալու հնարավորությունը բացակայում է: Ուրեմն, դրամական միջոցներից օգուտ ստանալը հնարավոր է միայն երրորդ անձանց հետ գործարքներ կնքելու միջոցով, այսինքն՝ տնօրինման իրավասության իրականացմամբ:

Ո՞րն է հանրային սեփականության առաջարկված տարբերակման նորույթն ու գործնական կարևորությունը և ի՞նչ առաջընթաց կարող է ապահովել նման տարբերակումը: Նախ, հանրային սեփականության տեսակների նորովի բաժանելու անհրաժեշտությունը պայմանավորված է սոցիալական պայմաններով, ինչով էլ հանրային սեփականության տեսակների տարբերակումն ըստ սուբյեկտային պատկանելիության չի բավարարում զարգացող տնտեսական հարաբերություններին առաջադեմ իրավական կարգավորում տալու համար: Մյուս կողմից՝ ազգային տնտեսությունում գործածվող հասկացություններն իրենց բնույթով չեն համապատասխանում կապիտալիստական հասարակարգի բաժանումներին ու հասկացություններին, հատկապես երբ քաղաքացիական իրավունքում սեփականության հարաբերություններն ուսումնասիրվում են ստատիկ, այլ ոչ թե դինամիկ հարաբերություններում: Առաջին հայացքից սեփականության իրավունքի օբյեկտները, անկախ նրանից մասնավոր, թե հանրային սեփականություն են, որևիցե առանձնահատկություն չունեն, ինչը գույքի կառավարման ազատության, մեթոդների և սկզբունքների մեջ է, որի փոփոխական սահմանները կախված են գույքի բնույթից և գույքի սեփականատիրոջ իրավական կարգավիճակից, որը

²⁸ Баренбойм П.Д., Гаджиев Г.А., Лафитский В.И., Мау В.А. Конституционная экономика: Учебник для вузов. – М. ЗАО Юстицинформ, 2006, էջ 376.

²⁹ Նույն տեղում, էջ 377.

պայմանավորում է գույքի իրավական ռեժիմը: Գույքի առանձին տեսակների իրավական կարգավիճակի սահմանումը բխում է նաև հանրային շահերից³⁰: Յուրաքանչյուր տեսական բաժանում արդարացվում է գործնական նպատակահարմարությամբ: Հանրային սեփականության տեսակների ըստ բովանդակության տարբերակման առավելությունն այն է, որ հանրային սեփականության իրավունքի շատ կանոններ դրանց առանձին տեսակների վրա չեն տարածվում, իսկ հանրային գույքի այդպիսի տարբերակումը հեշտացնում է դրա կառավարումն ու պահպանությունը՝ հաշվի առնելով գույքի նպատակային նշանակությունը, կարևորությունն ու առանձնահատկությունները: Հանրային սեփականության առաջարկված տեսակներից մի քանիսը, ինչպես, օրինակ, ֆինանսական գույքը, ունի առանձնացված և տարբերակված իրավական կարգավորում, քանզի հնարավոր չէ սեփականության իրավունքի օբյեկտները տնօրինել միևնույն ձևով: Գրադարաններն ու թանգարանները հանրային մարմինների նորմավորված կանոններով օգտագործվող գույքի տեսակներից են, որոնց առանձնացված իրավական կարգավորման աշխատանքները ընթացքի մեջ են: Այս հանգամանքը ևս հաստատում է հանրային սեփականության տեսակների տարանջատման մեխանիզմի հավաստիությունը, հանրային սեփականության տեսակներն ըստ իրավական ռեժիմի և դրա օգտագործման կարգի տարանջատելը և չի նշանակում, որ մեր կողմից առաջարկված հանրային սեփականության տեսակների ցանկը սպառնիչ է: Հանրային սեփականության ձևերի ոչ միայն սուբյեկտային հիմքով տարանջատելու պրակտիկան արտերկրում վաղուց սկսվել է կիրառել: Գերմանիայում առանձնացնում են հանրային սեփականության երեք տեսակ: Առաջին տեսակի գույքը հասարակական է, այսինքն՝ գույք, որը նախատեսված է հասարակության անմիջական օգտագործման համար («Sachen im Bergergebrauch»): Դրանք են՝ փողոցները, հրապարակները, պուրակները և այլն: Հանրային սեփականության իրավունքի մյուս օբյեկտները բառացիորեն կոչվում է «հաստատություններին հանձնված հանրային գույք» («Öffentliche Sachen im Anstaltsgebrauch»), որոնք կարող են անմիջականորեն օգտագործվել հանրության կողմից և վարչակազմի սահմանած կարգով. հանրային գրադարանները, թանգարանները, կոյուղիները և այլն: Վերջինը հանրային գույքի այն տեսակն է, որը հանձնվում է վարչական մարմինների լիազորություններն իրականացնելու համար («Sachen im Verwaltungsgebrauch»)³¹:

Հանրային սեփականության տեսակների դասակարգման հարցում եվրոպական երկրներից կարևորվում է հունական օրենսդրությունը, որն ընդօ-

³⁰ Բարսեղյան Տ. Կ. Գործարարական իրավունք, 2009, էջ 157.

³¹ Stelkens Ul. Le régime des biens publics en droit allemande, 2009, Paris, էջ 2.

րինակում է ֆրանսիական մոդելը: Իրավունքի այդ համակարգում հանրային սեփականության իրավունքի օբյեկտները դասակարգում է երեք խմբի.

- հանրային գույք, որը կարող է օգտագործվել յուրաքանչյուրի կողմից (փողոցներ, պուրակներ, այգիներ),

- վարչական գույք՝ հանրային ծառայությունների մարմիններին հատկացված գույքը, որն օգտագործվում է միայն հանրային-վարչական լիազորությունների համար (հոսպիտալներ, հիվանդանոցներ, դպրոցներ, և այլն),

- այլ բնույթի գույք (անտառներ, ֆինանսական գույք)³²:

Հաշվի առնելով ԵՄ-ում առկա միտումները և ՀՀ գործող ներպետական օրենսդրության նախադրյալները՝ հնարավոր է ազգային իրավական համակարգում օրգանական հայեցակարգի փոխարեն սեփականության ձևերի բաժանումը (հանրային ու մասնավոր և դրանց առանձին տեսակների) իրականացնել օրգանական և գործառնական հիմքերի համադրմամբ:

Անկախության տարիներին սեփականության կառավարման արդյունքները ի ցույց դրեցին, որ հանրային սեփականության տեսակների նման բաժանումը չի ապահովում դրա արդյունավետ կառավորումը: Հաշվի առնելով հայկական իրավական համակարգի առանձնահատկությունները՝ առաջարկում ենք հանրային սեփականության ձևերը բաժանել ըստ օբյեկտների նպատակային օգտագործման և դրա իրավունքների և պարտականությունների ամբողջականության: Ըստ այդմ՝ ՀՀ օրենսդրությամբ հանրային սեփականության իրավունքի իրավական կարգավորումն իրականացնել՝ ընդունելով հանրային գույքի հետևյալ տեսակները՝

- ✓ հասարակության անմիջական օգտագործմանը հանձնված գույք,
- ✓ հասարակության՝ պետական մարմինների նորմավորված կանոններով օգտագործման գույք (պետական արխիվ, գրադարաններ, թանգարաններ, արգելոցներ, գերեզմաններ և այլն),
- ✓ հատուկ պետական նշանակության (պաշտպանական, սահմանային, ռազմական, ազգային անվտանգության, արտակարգ իրավիճակների և քաղապաշտպանությունն ապահովող և այլն) գույքը,
- ✓ գույք, որը հատկացված է պետական/տեղական մարմինների պարտադիր լիազորությունների իրականացման համար,
- ✓ ֆինանսական գույք,
- ✓ գույք, որը հատկացված է պետական/համայնքային հասարակության անվտանգության, ռազմավարական, այլ հանրային շահերի ապահովմանը,
- ✓ այլ տեսակի գույք (անտառներ, արգելավայրեր, արգելոցներ և այլն):

³² Moor Pierre Droit administratif, Berne Editions Staemp, 1994, p. 12 Droit administratif des biens: Domaine public et privé, travaux publics, Expropriation ; 5^e édition, Paris, 2008, էջ 6,

Mikayel KHACHATRYAN

Civil law forms for distinctions of Public Property

Key words: public property, forms of property, administrative property, community property, cultural property, financial property, state needs

The article entitled “The forms of Public Property” dedicated to illustrate different types of public property with the purpose of improving relevant legislation. According to the author, following the collapse of Soviet Union the experience of public property governance shows up that public property concept and distinction of types existing in Armenian law are not efficient in practice and do not satisfy of Armenian society’s current needs, therefore, there is inevitable necessity to review those legislative approaches.

Микаел ХАЧАТРЯН

Гражданскоправовое разделение видов публичной собственности

Ключевые слова: публичная собственность, формы собственности, общественная собственность, административная собственность, государственные нужды

Настоящая статья посвящена к иллюстраций различных видов публичной собственности с целью улучшения соответствующего законодательства. Согласно автору, практика независимых годов показало, что действующее в законодательстве Армении разделение видов публичной собственности не эффективны и не удовлетворяют текущие потребности армянского общества. По результатам исследований автор обнаруживает, что законодатель провел различение видов публичной собственности по органическому критерию (государственная собственность, муниципальная собственность, частная собственность).

Միքայել ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հանրային սեփականության ձևերի տարանջատման քաղաքացիաիրավական կարգավորման խնդիրները

Բանալի բառեր: հանրային սեփականություն, սեփականատության ձևեր, հասարակական սեփականություն, վարչական սեփականություն

Սույն հոդվածը վերաբերում է քաղաքացիական իրավունքում հանրային սեփականության ձևերի բաժանման հիմնախնդիրներին: Հեղինակը վերլուծել է հանրային սեփականության տարբեր դրսևորումները, դրանց բաժանման հիմնահարցը ինչպես ազգային, այնպես էլ արտասահմանյան երկրների իրավական համակարգերի հարթություններում: Հեղինակի կարծիքով՝ սովետական կարգերի փլուզումից հետո ազգային իրավունքում սեփականության իրավունքի ձևերի տարանջատման մոդելն արդյունավետ չէր և չէր արտահայտում տնտեսական հարաբերությունների իրական վիճակը, ուստի և համակարգային փոփոխությունների կարիք են զգում: